ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՀՐԱՎԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր/ՏՏԵԶ/
Վարկի համարը՝ P150327
Առաջադրանքի անվանում՝ Ջերմուկ քաղաքի ըմպելասրահի վերակառուցում ուժեղացումով աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական վիճակի ուսումնասիրություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ LEX-01-2

10 օգոստոսի, 2021թ.

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում՝ **«Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագրի»** (ՏՏԵԶԾ) իրականացման նպատակով: Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման Ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: Ակնկալվում է, որ Ծրագրի գործունեության արդյունքում կշահեն մասնավորապես Հայաստանի տարբեր մարզերի տեղաբնակները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները: Ակնկալվում է, որ վերանորոգված մշակութային ժառանգության վայրերում և քաղաքներում հանրային ենթակառուցվածքներն ավելի մեծ մատչելիություն և որակ կունենան, տարածաշրջանում կաճի մասնավոր հատվածի ներդրումների ծավալը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների քանակը: Կառավարությունը կշահի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր ծախսերի և զբոսաշրջիկների բավարարվածության բարձրացման, աշխատատեղերի ստեղծման, գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ակտիվների շահագործման և պահպանման կարողությունների բարելավման առումով: ՏՏԵԶԾ բաղադրիչներից մեկը վերաբերվում է Հանրային ենթակառուցվածքի տրամադրում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

Առաջադրանքի նպատակը. Ծրագրով նախատեսվում է ամրացնել և վերազանգնել գոյություն ունեցող կառույցը, պահպանելով շենքի ճարտարապետական հորինվածքը: Այդ նպատակով նախատեսվում է պատվիրել ըմպելասրահի, հարակից հարթակի և երիզող հենապատերի տեխնիկական վիճակի մանրամասն հետազոտություն, որի արդյունքների հիման վրա կպատվիրվի շենքի վերակառուցման և ամրացման նախագիծ:

Խորհրդատու կազմակերպության գործունեության հիմնական շրջանակներն են՝

1. Կառույցի համալիր հետազոտություն
2. Առանձին մասերի հետազոտություն (հիմքեր, ծածկեր, տանիք, կրող կարկաս կամ պատեր և այլն)
3. Բետոնների ֆիզիկա-մեխանիկական հատկությունների (ամրություն, ցրտակայունություն ջրանթափանցելիություն) հետազոտություն
4. Քարե պատերի, սյուների և այլ տարրերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների հետազոտություն, ըստ հետևյալ ցուցանիշների և քանակների

N	Գլանի հորատում, ամրության և խտության որոշում	Առանձ գականության մոդուլի որոշում	Պատերի հատման հատվածում շարվածքի ուսումնասիրություն	Քարե շարվածքի մեջ դատարկությունների որոշում ուլտրաձայնային մեթոդով
	քանակ	քանակ	քանակ	քանակ
1	6	2	4	6

N Գլանի հորատում, ամրության և խտության որոշում- քանակ 6
N Առանձ գականության մոդուլի որոշում- քանակ 2
N Պատերի հատման հատվածում շարվածքի ուսումնասիրություն- քանակ 4
N Քարե շարվածքի մեջ դատարկությունների որոշում ուլտրաձայնային մեթոդով- քանակ 6

5. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետազոտություն
6. Ապահովել հետազոտական աշխատանքների իրականացումը ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետների

8. Պայմանագրի ժամկետի շրջանակներում մասնակցել Պատվիրատուի կամ այլ շահագրգիռ կազմակերպության կողմից հրավիրված խորհրդակցություններին:
9. Ուժեղացման՝ սեյսմազինվածության հասցնում գործող նորմատիվ պահանջների մակարդակին, համար անհրաժեշտ միջոցառումների նկարագրություն, հաշվի առնելով մշակութային ժառանգության օբյեկտների վերականգնմանը ներկայացվող հատուկ պահանջները:

Խորհրդատուի հետ կնքվի միանվագ պայմանագիր:
Ծառայությունների մատուցման առավելագույն ժամկետը՝ 40 օր:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկատվություն (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության փորձառությունը հավաստող նախկինում կատարած աշխատանքների ցանկը:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշներն են.

Վերջին 5 տարիների ընթացքում՝

- ***Կազմակերպության կողմից կառույցների տեխնիկական վիճակի ուսումնասիրության ընդհանուր փորձառությունը,***
- ***Հասարակական կառույցների տեխնիկական վիճակի ուսումնասիրության փորձ,***
- ***Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար:***

Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չի ներկայացնել տվյալ փուլում:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ", 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:
Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների

շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ” 3.7 կետում սահմանված “Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն” ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ խորհրդատուները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան **2021թ. սեպտեմբերի 30-ը, ժամը 17:00-ը:**

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Գնումների բաժին
Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 407 սենյակ
Էլ-փոստ՝, procurement@atdf.am
Հեռ: (+37460) 50 15 60